

Տեղի ունեցավ ուսուցիչների օգոստոսյան կոնֆերանսը

26.08.2015

Օգոստոսի 25-ին Գեղարքունիքի մարզպետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ուսուցիչների օգոստոսյան կոնֆերանսը: Այն անցկացրեց Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը: Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում էր ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը: 2014-15 ուսումնական տարվա կազմակերպած աշխատանքների և 2015-16թթ անելիքների մասին զեկուցմամբ հանդես եկավ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Գարիկ Բադալյանը: Ըստ զեկուցման՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացված աշխատանքները նպատակաուղղվել են ապահովելու կրթության որակի բարձրացումը, համակարգի արդյունավետ գործունեությունը, կրթություն ստանալու հավասար մատչելիությունը: Ուշադրություն է դարձվել դպրոցների ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, հատուկ կրթության և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական համակարգում ինտեգրելուն ուղղված միջոցառումների իրականացմանը, նախադպրոցական կրթության համակարգի մատչելիության ապահովմանը: Որոշակի աշխատանք է կատարվել նաև ներառական կրթության ընդլայնման առումով, դպրոցները մանկավարժական կադրերով համալրելու ուղղությամբ: Առանձնակի ուշադրություն է դարձվել հաստատությունների տնօրենների կողմից իրավական ակտերի կատարմանը և ՀՀ օրենսդրությանը դրանց համապատասխանությանը: Աշխատանքներ են իրականացվել դպրոցները համակարգչային տեխնիկայով և տեղեկատվական տեխնոլոգիաներով վերազինելու և կրթական գործընթացին նպաստող բազմաթիվ ուղղություններով:

Նախարար Արմեն Աշոտյանն իր ելույթում անդրադարձավ հատկապես այն խնդիրներին, որոնց հետ նոր ուսումնական տարում ավելի հաճախ է հնարավոր առնչվել: Ըստ նախարարի՝ ՀՀ ԱԺ-ի հաստատմամբ 2017 թվականի հունվարի 1-ից ՀՀ քաղաքացիների համար նվազագույն կրթական շեմը հանդիսանալու է 12-ամյա կրթությունը: Նշվեց նաև, որ պետությունը համարժեք ֆինանսական հատկացումներ է կատարել, կրթությունը արհեստագործական հոսքերում կազմակերպելու ուղղությամբ: Արմեն Աշոտյանն իր ակնկալիքները փոխանցեց մարզի կրթության համակարգի ներկայացուցիչներին, կրթության զարգացման պետական նոր՝ 10-ամյա ծրագրի կազմման աշխատանքներին մասնակցելու համար: Խոսելով կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաներին կրթական ծառայություն մատուցելու գործընթացի մասին, նախարարը կարևորեց առաջիկայում մարզում համընդհանուր ներառական կրթության ցանց ստեղծելը, ինչի արդարացված նախադեպը կա Տավուշի մարզում: „Դպրոցներում տնօրեն աշխատելու

թույլտվության հավաստագրի հետ կապված ԿԳ նախարարությունը մշակել է նաև նոր կարգ, որը թույլ է տալիս նաև տնօրենին զրկել հավաստագրից: Ես համոզված եմ, որ Գեղարքունիքի մարզի տնօրենները իրենց աշխատանքները կկազմակերպեն այնպես, որպեսզի առիթ չունենան առնչվելու նոր կարգով սահմանված չափորոշիչների հետ: Գեղարքունիքի մարզի կրթական համակարգում տարակարգ ունեցող մանկավարժների թվի սակավ է: Ուստի ես խնդրում եմ լինել համարձակ և մտնել տարակարգ համակարգի մեջ, ինչը և խթանելու է մանկավարժի մասնագիտական շարունակական կատարելագործումը,- իր խոսքում նշեց Արմեն Աշոտյանը: Նախարարը կարևորեց դպրոցներում „Պատանի երկրապահների ակումբ,-ների ստեղծումը և „Ազգային երգ ու պար,, առարկայի դասավանդումը: „Համաշխարհային բանկի նոր ծրագրով բոլոր մարզերում, այդ թվում և Գեղարքունիքի մարզում, մենք պատրաստ ենք բացել նվազագույնը 10 նոր նախակրթարաններ, և եթե կարիքը լինի և համայնքը պատրաստակամություն հայտնի, նաև՝ ավելին,, - տեղեկացրեց Արմեն Աշոտյանը: Իր ելույթի ավարտին կրթության նախարարը տեղեկացրեց, որ նոր ուսումնական տարվա նախաշեմին մարզի բոլոր ավագ և խոշոր միջնակարգ դպրոցներին կտրամադրվի դպրոցական գույք և որոշ սարքավորումներ: Ամփոփելով կոնֆերանսի աշխատանքները, Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը հատկապես անդրադարձավ դպրոցական շինարարությանը: Ըստ մարզի ղեկավարի՝ սեպտեմբեր ամսին կհայտարարվի մրցույթ, որի արդյունքում կսկսվեն Սևան և Մարտունի քաղաքների ավագ դպրոցների շինարարական աշխատանքները: „ՀՀ կառավարությունը Ասիական զարգացման բանկի ֆինանսական աջակցությամբ Գեղարքունիքի մարզի 3 վթարային և 4-րդ կիսավթարային դպրոցների կառուցման համար առաջիկայում կհայտարարի մրցույթ: Կայացած մրցույթի արդյունքում առաջնահերթությունը կտրվի Գավառ քաղաքի N2 միջնակարգ դպրոցի կառուցմանը,, - տեղեկացրեց Գեղարքունիքի մարզպետը: Ռաֆիկ Գրիգորյանը տեղեկացրեց նաև, որ այս տարվա ընթացքում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ավարտին կհասցվի Հայրավանքի և Սևանի N2 միջնակարգ դպրոցների շինարարությունը: Մարզպետը աննախադեպ համարեց մարզի 21 դպրոցներում տնտեսված միջոցների հաշվին նորոգման աշխատանքներ կատարելը, և հորդորեց մնացած դպրոցների ղեկավարներին ընդօրինակել այդ նախաձեռնությունը: „ Մենք այս աշխատանքների ընթացքում հատկապես կարևորում ենք դպրոցներում սանհանգույցների կառուցումն ու ջրամատակարարման ապահովումը, որից հետո, նման միջոցների առկայության դեպքում, առաջնահերթությունը կտրվի ջեռուցման գործընթացի բարելավմանը,, նշեց մարզպետը: Խոսվեց նաև դպրոցական սննդի ապահովման աշխատանքներում սանիտարական նորմերի պահպանման, հանրակրթության ոլորտում ի հայտ եկած մի շարք խնդիրների և բացթողումների մասին: Հանդիպման ավարտին ՀՀ ԿԳ նախարարը և Գեղարքունիքի մարզպետը շնորհավորեցին

ներկաներին

նոր

ուսումնական

տարվա

կապակցությամբ: